Հայտարարություն

Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի հատուկ մանկավարժի թափուր տեղի մրցույթի

09.11.2023

Հայտարարություն . Արմավիրի մարզի Վաղարշապատ համայքի Էջմիածնի թիվ 13 «Ծիծեռնակ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հետևյալ մանկավարժական աշխատողների ընտրության համար.

1.Հատուկ մանկավարժի (1 դրույքաչափ):

Մրցույթին մասնակցելու համար ըստ ՀՀ ԿԳՄՄՆ նախարարի 17 փետրվարի 2022 թ. թիվ 08-Ն հրամանի 12-րդ կետի պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1).

2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).

3) անձը հաստատող փաստաթուղթ.

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).

5) ինքնակենսագրություն (Ձև 4).

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 9-ից դեկտեմբերի 7-ը ներառյալ, բոլոր աշխատանքային օրերին՝ ժամը 9^{00}-17^{00} ք. Էջմիածին, թիվ 13 «Ծիծեռնակ» մանկապարտեզ (Բաղրամյան փողոց 0) կամ Վաղարշապատի համայնքապետարան (սբ. Մեսրոպ Մաշտոց 0, Կրթության և մշակույթի բաժին):

Մրցույթին կարող է մասնակցել Կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի N 416-Ն հրամանով սահմանված տարիֆառակավորման պահանջներին համապատասխանող անձը, ըստ որի անհրաժեշտ է՝ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ:

Հատուկ մանկավարժի թափուր հաստիքի մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 14-ին, ժամը 11^{00} Վաղարշապատի համայնքապետարանի կրթության և մշակույթի բաժնում:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ հաստատած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին՝ համաձայն ԿԳՄՄՆ հաստատած հարցաշարի:

Տեղեկությունների համար զանգահարել 077- 25- 60- 61 կամ 094 56-66-45 հեռախոսահամարներով:

Հասցեն՝ Բաղրամյան 0

Հեռ՝.. 077-25-60-61. 094-56-66-45

Վեբ կայք՝ https://ejmiatsin.am/

_**Էլ. Փոստ.** tiv13cicernak@mail.ru